Արձանագրություն N: 3

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (ԵՊՀ) կարիքների համար կազմակերպված «ԵՊՀ-ԲՄԾՁԲ-21/161» ծածկագրով ԵՊՀ աշխատակիցների առողջության ապահովագրության ծառայությունների փաթեթի ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«29» նոյեմբերի 2021 թ.
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Ա. Թադևոսյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ ԳՊ/ԳԱՊ)

հանձնաժողովի անդամներ՝

Մ. Վարդանյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ)

Ա. Գասպարյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ)

Ն. Սուքիասյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ)

Ա. Կոստանյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ)

հանձնաժողովի քարտուղար՝

Ա. Աղուզումցյան՝ (Գնման պատասխանատու/ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/ՄՀՄ)

1. Տեղեկություն՝ «ԵՊՀ-ԲՄԾՁԲ-21/161» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

Հայտերը բացվել են www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային գնումների իրականացումն ապահովող համակարգի /այսուհետ՝ Համակարգ/ միջոցով՝ 2021 թ.-ի նոյեմբերի 29-ին, ժամը 12:00-ին՝ ք. Երևան, Ալեք Մանուկյան 1 հասցեում:

2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայությունների գների վերաբերյալ.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գները՝ մեկ թվով արտահայտված.

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Գնման հայտով սահմանված գինը՝ մեկ թվով արտահայտված /ՀՀ դրամ/
1	«ԵՊՀ աշխատակիցների առողջության ապահովագրության ծառայությունների փաթեթ»	180 000 000

3. Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները

N	Մասնակցի անվանումը	Հասցեն և կոնտակտները.
1	«Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Ավետ Ավետիսյան 116/1 և 116/5 Հեռ.՝ +374 60 500060
2	«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ	ՀՀ, ք. Երևան, Արամի փ. 3 և 5 Հեռ.՝ +374 60 540000
3	«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 16, 1/1 տարածք Հեռ.՝ +374 11/12 560404

Ներկայացված հայտերը Համակարգի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

4. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.

Հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

Հայտերի վերաբերյալ եղել են 2 հարցումներ, որոնց տրվել են պատասխաններ:

6. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

«Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ, «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ և «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը պարունակում են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

7. Տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի (հայտում առկա փաստաթղթերի)՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

«Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ, «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ և «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը (հայտում առկա փաստաթղթերը) կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

8. Մասնակցի (մասնակիցների) կողմից առաջարկված գները հետևյալն են.

Հ/Հ	Չափաբաժնի անվանումը	«Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ		«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ		«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ		
		Գինը առանց ԱԱՀ-ի	Գինը ներառյալ ԱԱՀ-ն	Գինը առանց ԱԱՀ-ի	Գինը ներառյալ ԱԱՀ-ն	Գինը առանց ԱԱՀ-ի	Գինը ներառյալ ԱԱՀ-ն	Գնման հայտով սահմանված գինը՝ մեկ թվով արտահայտված /ՀՀ դրամ/
1	«ԵՊՀ աշխատակիցների առողջության ապահովագրության ծառայությունների փաթեթ»	518400000	518400000	176064000	176064000	176640000	176640000	180000000

9. Տեղեկություն՝ մրցույթի արդյունքների ամփոփման մասին.

Ղեկավարվելով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով՝ հանձնաժողովը որոշեց՝

- ընտրված մասնակից ճանաչելու նպատակով («ԵՊՀ-ԲՄԾՁԲ-21/161» ծածկագրով գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին համապատասխան) - գնման ընթացակարգի բոլոր մասնակիցներին հրավիրել միաժամանակյա բանակցությունների, որը տեղի կունենա 2021 թ.-ի դեկտեմբերի 2-ին՝ ժամը 16:00, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1, 209 սենյակ հասցեում,
- հանձնարարել հանձնաժողովի քարտուղարին կազմակերպել և անցկացնել այդ բանակցությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0:

Հանձնաժողովի նախագահ (ԳՊ/ԳԱՊ)՝ Ա. Թադևոսյան _____ ստորագրություն

Բացող անդամներ (ԳՊ/ԲԱ)՝ Մ. Վարդանյան _____ ստորագրություն

Ա. Գասպարյան _____ ստորագրություն

Գնահատող անդամներ (ԳՊ/ԳԱ)՝ Ա. Կոստանյան _____ ստորագրություն

Ն. Սուքիասյան _____ ստորագրություն

Հանձնաժողովի քարտուղար (ՄՀՄ) Ա. Աղուզումցյան _____ ստորագրություն